3565
հայերեն

X 2000

1979-626

1979-Կի ԿԾ/ ուճ 3565

# ՏԵՏՐԱԿՍ Ա—ՅՍ

որ կոչի քաղցրաւորութիւն։

Տպագրեցաւ ՚ի Հայրապետութեան գե րագահ աթոռոյ ս՜րբ Էջմիածնի՝ Տ՜ն Ղուկասու սրբազան Կաթուղիկոսի ամ՜ Հայոց։

Եւ ՚ի Պատրիարգութեան Ս՜բյ Աթո– ռոյն Ե՜էմի Տ՜ն Յովակիմայ գերեր– ջանիկ Պատրիարգի։

Եւ ՚ի գիտողութեան մեծի կոստանդնու– պօլսոյ Տ՜ն Զաքարիայ Ազգասէր և Ա՜ծաբան Պատրիարգի · որոյ ծախամա– նաւն տպեցաւ գրքոյկս այս։

՚Ի թուին հայոց՝ ռմլզ. Սեպտեմբերի ջ։

՚Ի Տպարանի Յօհաննիսի և Պօղոսի

17



# ԳԻՐՔ

## Յաղագս Քաղաքավարութեան։

### Գլուխ Առաջին։

Հարց։

Զի՞նչ է քաղաքավարութիւնն։

Պատ։

Քաղաքավարութիւնն է բարի ունակութիւն մտաց և համեստ գործավարութիւն մարդոյ ըստ ախորժութեանցն հասարակաց։

Հարց։

Որպիսաք կերպիւ՞ պարտ իմ առնել։

Ի

*Պատ:

Ի յայսմ գործս քո պարտիս նկատել զբարեհամբաւութիւն անուան քոյ. նաև զօգուտն անձինդ և զհաճութիւն հասարակաց:

*Հարց:

Յառաւօտուն յորժամ ՚ի քնոյս ելանեմ՝ զի՞նչ պիտոյ է առնել:

*Պատ:

Յամ առաւօտու յորժամ որ ՚ի քընոյդ ելանես՝ շուտով արի կանգնէ՝ և խաչակնքելով ասա. յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. և ապա սկսիր ասել. գոհանամ զքէն բարերար Աստուած. զի զիս անարժանս հասուցեր յայսմ ժամու առաւօտուս. և յետոյ սկսիր զողջոյն քեզ Մարիամ. և զՀայր մերն. և զՀաւատով խոստովանիմն և զայլ սովորական աղօթս զոր ինչ գիտես ասա կամ ծնրադրական երկրպագութեամբ եթէ չես գնալոց յեկեղեցին վասն հարկաւոր և բանաւոր գործոյդ: Իսկ թէ գնալոց ես յեկեղեցին՝ զհան-

դեր

դերձդ հագանելով և լուանալով զերեսդ և 'ի ճանապարհին գնալով ասա զաղօթս քո մտադրութեամբ:

Նա՛ զգուշ լեր · զի մի՛ յորժամ զարթնուս 'ի քնոյդ՝ զմիտքդ աստին անդին ճապաղել տար և անշահ և հոգոյ վնաս բան մտածեր · և մի՛ ծուլանար ելանել 'ի յանկողնոյդ · և թէ ելանես՝ շուտով հագիր զհանդերձդ և մի՛ շրջիր աստ և անդ մերկ կամ զըպունով կամ գիշերոյին գտակովդ և կամ գօտէարձակ , զի մի՛ մրսիցիս և կամ օտարական մարդ կամ բարեկամ սիրելի կամ ընտանի հանդիպիցի յանկարծակի և ամաչիցես:

*Հարց:

Յորժամ որ գնամ յեկեղեցին , զի՞նչ պարտ է առնել:

*Պատ:

Յորժամ յեկեղեցին որ գնաս, 'ի բաց ձգէ 'ի քէն զամ դատարկ մտածմունքներն և զբաղմունքներն քո · և զմիտքդ 'ի քեզ ժողովէ , որ դու մի-



այնակ

ոյնակ զանունիս առաջի այ . ոպ ասաց տրն մեր յս քս թէ , յորժամ կայցես աղօթս, մուտ 'ի սենեակ քո եւ փակեա՛ զդուրս քո . եւ հայրն քո զոր տեսանէ 'ի ծածուկ՝ հատուսցէ քեզ յայտնապէս։ զոր ինչ աղօթք որ կասես՝ կամ երկրպագութիւն կու անես՝ մտադրութբ արա ։ եւ յորժամ յաղօթիցդ կու խաղխախ՝ միտ դիր զոր ինչ ընթեռնուն . եթէ սբ աւետարանն իցէ՝ կամ պատարագ՝ եւ կամ շարական՝ եւ կամ այլ ինչ գիրք՝ եւ կամ քարոզ ։ 'ի Նստիլդ եւ 'ի կանգնիլդ պարկեշտու-

թեամբ շարժիր ։

Ու՛ զգուշ լեր՝ զի մի՛ հայեսցես աստ եւ անդ 'ի յաղօթելն եւ կամ 'ի յերկրպագութիւն անելդ ։ մի՛ հրեր զդք եւ մի՛ Նեղեր զընկերդ . եւ մի՛ բարձր ասեր զաղօթս քո . եւ մի՛ բարձր հառաչեր , զի խափանեսցես զաղօթս այլոց , զի մի՛ շփոթեսցին եւ կամ 'ի քեզ հայեսցին կամ զարմանայցեն ։ մի՛ շատ Նըստիր 'ի յեկեղեցին եւ կամ



երկար

երկար խօսիր հետ այլոց ․ մի՛ խօսիր
առատապէս բանս և մի՛ լսեր յայլոց ․ և
մի՛ լրաբար ծիծաղիր ․ 'ի նստիլ ժո_
ղովրդեան՝ դու մի՛ կանգնած մնար ․
և 'ի կանգնելոյ ժամանակն մի՛ նստիր՝
եթէ ոչ իցես տկար կամ հիւանդ և
կամ խիստ ծեր ։ մի՛ թքնուր աստ և
անդ ․ այսինքն մի 'ի մէջ պատուհանի
կամ 'ի ներքև խորշերին և կամ յետև
դրան և կամ 'ի մէջ փապուջրուխին
և կամ ուր և իցէ ․ այլ միայն 'ի մէջ
թաշկինակին ․ այսինքն , մահրամայիդ
մէջն կամիցուկ մի թուք որ այլք չի
լսեն ։ և մի՛ հայիր 'ի վերայ թքածիդ
կամ խնջածիդ ․ և յորժամ որ խնջես՝
մի՛ գուայներ գ.քիթդ ։ 'Ի հազոյն քո
և 'ի խուխալն՝ մի՛ օռնար և մի՛ խան_
չուն. հաներ խոզի նման ․ և մի՛ աղաղա
կամ գ.քո ձայնդ բարձրայներ ․ այլ
համեստութեամբ արասցես ։

*Դորդ ։

Որպէս պարտ է առնել մինչ գնամ
կամ ընթանայն իմ 'ի ճանապարհ ։

✲ Պար :

Յորժամ ընթանաս կամ գնաս 'ի ճանապարհ, զգլուխդ միջակ ըմբռնեա· ո՛չ խիստ ցած և ո՛չ խիստ բարձր · և յառաջդ հայելով գնա : Նմանապէս քայլեն քո միջակ թող լինի · ո՛չ խիստ շուտ և ո՛չ խիստ թոյլ · եթէ իցէ ճանապարհն ցեխոտ կամ ջամուռոտ, ընտրելով գնա զկոխելոց տեղերն և յառաջէդ քան զքեզ մեծ մարդ որ գայ, կամ իշխան կամ կարգաւո՛ր և կամ այլազգք՝ 'ի վայր իջիր : ոտքերդ 'ի գետինն զարկելով և կամ թնթելով մի՛ գնար :

Լո՛ զգուշ լեր · զի 'ի քայլելդ մի՛ շարժեր զգլուխդ հպարտաբար կամ խենթաբար · և զմի զձեռքերդ կամ աջքերդ · և մի՛ ուտեր զկերակուր կամ միրգ 'ի ճանապարհին և մի՛ ընդ քեզ խօսիր · և մի՛ զձեռնդ վերացնելով բան ինչ մտածեր և մի՛ ծիծաղիր · և մի՛ առնուր 'ի ձեռքդ փայտ կամ քար և հարկանէր աստ և անդ և մի՛ ձայն

հանել խաղ կամ տաղ ասելով ։ մի՛ գնալ խաղալով կամ ծամուկելով. կամ 'ի վերայ մատներուդ կոխելով. և մի՛ զձեռքերդ յետևդ կապելով. կամ 'ի վերայ միջացդ դնելով։ Նաև երկու ձեռքդ միատեղ մի՛ դներ 'ի ծնկերդ. այլ զմի ձեռքդ դիր և զմիւսն 'ի դուրս հան թէ և ցուրտ եւս իցէ ։ զբերանդ մի՛ բաց թողուր. և զքայլ ոտիցդ կամ զամբուշդ մի՛ խիստ բանար. այլ չափաւոր արասցես ։

✼ Հարց։

Ե, թէ ընկեր հանդիպի 'ի ճանապարհին. որպէս պարտ է առնել կամ գնալ ընդ նմա։

✼ Պատ։

Յորժամ հանդիպիս ընկերի, տեսցես թէ որ քան զքեզ փոքր է՝ դու տուր նրմա ողջոյն. իսկ եթէ քան զքեզ մեծ է տարօք կամ պատուով և կամ կարգաւ, համբերեա՛ նմա՝ որ նա բարևեսցէ քեզ կամ ողջոյն տացէ, և դու առնուցուս խոնարհութեամբ։

Եւ 'ի գնալն քո հետ ընկերիդ՝ միշտ ջա-
նա որ 'ի վարի կողմէն քայլես . և նա
'ի վերին կողմէն թող որ քայլէ . և
կամ 'ի յաջ կողմէդ ։ Իսկ թէ եր-
կուք իցեն ընկերքն քո, ջանա զի յեր-
կուքէն ո՞րն որ առաւել մեծ է կամ
պատուելի՝ զայն մէջ ձեր առնելով՝
այնպէս գնացէք ։

Լա՛ւ զգոյշ լեր . զի մի՛ երթայցէք խիստ
բարձր խօսելով և կամ լրբաբար ծի-
ծաղելով . և կամ զայլս ծաղր առնե-
լով . և մի՛ ընկեր լինիր հետ չար ա-
րանց կամ կանանց և մի՛ ունիցիս 'ի
ձեռս քո կամ 'ի գօտիդ ծաղիկ կամ
մահրամա , կամ այլ ինչ խաղալիք ։
և մի՛ թըքանէր առաջի ընկերացդ կամ
խնջէր . այլ դարձո՛ զերեսն քո 'ի դա-
տարկ կողմն ։ և մի՛ ցեխոտէր զհան-
դերձդ կամ զկօշիկներդ և կամ ըզ-
փափուչդ ։ և մի՛ երևեցուցանէր ըզ-
խլլէք 'ի քթէդ 'ի վայր կախեալ .
զի կարի մեծ ամօթ են այդոքիկ ։

Իսկ 'ի գնալն ընդ մեծաւորի կամ
վար

վարպետի՝ կամ քան զքեզ մեծագունի՝ միշտ յետևէն գնա. և մի՛ երթար համասար կամ յառաջ քան զնա։

✲ Հարց։

Ի խօսակցիլ և՛ ի կենցաղավարիլն ընդ զանազան մարդկանց որպիսի կերպիւ պարտիմ վարիլ։

✲ Պատ։

Շատ խոհեմութիւն պիտոյ է քեզ. զի զքեզ յառաջագոյն չափեա՛ և կշռեա՛. զի թէ բարկասիրտ ես և ոչ կարես տանիլ այլոց հանաքից կամ շատախօսից և կամ ծանր խօսից, գոնեա՛ շատ մի՛ աներ և մի՛ դպչիր այլոց ծանր խօսիւք։

Իսկ եթէ կամենաս կամ ջանաս ասել. նոքա այլ քեզ կասեն. յորժամ պարտիս համբերել և զանց առնել զոր ինչ լսես. և թէ ոչ կարես համբերել, մի՛ կենցաղավարիր հետ մարդկանց, զի մի՛ երևեսցի տկարութիւն քո. զի շատ խռովութեան պատճառ լինիս։

Ի տուն բարեկամին քո առանց կո-



չէ

չելոյ մի՛ երթար վասն ուրախութե:
բայց յորժամ իմանաս զհիւանդութի
կամ զմահն նորա , յայնժամ առանց
կոչելոյ գնա առ 'ի տեսանել և մխի-
թարել զնա և շահիլ սիրով:

Այս գիտելի է՝ զի ընդ որոց որ կու-
կենցաղավարիս և կամ հանդիպիս ,
իմացիր թէ՝ ո՞րպիսի մարդ է և կամ
զի՞նչ արհեստ կու գործէ և իւր
սիրտն զի՞նչ բան առաւել կու սիրէ՝
զայնպիսի բանից խօսիր և հարցիր:
զի Պտօլօմէոս իմաստասէրն կու ասէ
թէ՝ յորժամ խօսիս ընդ իշխանաց մա-
նաւանդ այլազգեաց , պարտիս խօսիլ
և հարցանել վասն իշխանութեանց և
մեծութեանց և պատուոց և վս հա-
ւատարիմ ծառայից և վասն քաջու-
թեանց և զինուց և ձիոց և թռչնոց
գեղեցիկ խօսողաց և վասն որսացող
թռչնոց և շանց: Ընդ կանանց՝ պարտ
է խօսիլ վս քաղաքավարութեց և մար-
դավարութեց , և վս վայելուչ զգես-
տից և զարդարանաց լուրոց և տանց :



Ընդ

Ընդ տղայոց՝ պարտ է խօսիլ զխաղալի
իրաց և պտղոց ուտելեաց և զգեստուց։
Ընդ ծերոց և ընդ կրօնաւորացն՝
պարտ է խօսիլ և հարցանել վասն հա-
մեստութեանց, ողջախոհութե և բա-
րեխառնութեանց և սրբութե։
Ընդ գիտնոց՝ պարտ է խօսիլ կամ
հարցանել զբան իմաստութեան և գի-
տութեց։ Ընդ գեղայոց՝ պարտ է
խօսիլ զսերմանելոյ զփորելոյ զհեր-
կելոյ զերկիրն զտնկելոյ և մնուցա-
նելոյ զծառս և զորթս։
Ընդ աղքատացն՝ զողորմութէ և
զյուսադրութէ և զհամբերութեց։
Նոյնպէս և ընդ հիւանդացն՝ զհամ-
բերութէ և զդեղոց և զբժշկութէ
և զայլոց նմանեացն։ և զգուշ լեր զի
մի՛ անպատեհ և անվայելուչ բանս
խօսիցիս ։ այլ ըստ մարդկանց զիւ-
րեանց հաճելեացն խօսեա՛ ։
Առաջի մարդկանց մի՛ զքեզ գովեր ·
քանզի է հպարտութիւն ․ և մի՛ պար
սաւեր զի է յիմարութիւն։

 Երկու

Երկու մարդ որ միատեղ կու խօսին՝
մի՛ ականջ դներ ․ այլ շուտով անցիր։
Երկու մարդ հետ միմեանց որ կու
վիճաբանին, մտածեմ թէ ո՞ր կողմն
ճշմարիտ է՝ անոր կողմնէն խօսեմ ․ և
մի՛ խափաներ զճշմարտութիւնն երես
պաշտութեամբ։ Եւ եթէ դու իցես
որ վիճաբանիս, ինատ մի՛ քշեր։
Իսկ թէ ընկերդ հաւանի բանից քոյ,
մի՛ հպարտանար կամ շարժեր զգլուխդ
և կամ խորոխտար ՚ի վերոյ նր̃ ․ այլ
համեստութեամբ կացիր։
՚Ի մէջ գիտուն մարդկանց որ գտան_
ուիս, դատարկ բան մի՛ խօսիր ․ նաև
թէ լաւապէս որ խօսիս՝ սակաւ խօ_
սիր և թոյլ տուր, զի միւսներն այլ
խօսին ․ և յորժամ այլքն որ խօսին,
դու մի՛ խօսք բերէր ասելոյ և կտրեր
և կիսատ թողուր անոնց պատմածն ․
այլ համբերեա մինչև որ լմնան պատմեն։
և թէ այլքն որ դատարկ և ունայն խօ
սին, մի՛ ծաղր առներ զնոսա ․ և մի՛
ծիծաղեր ՚ի մէջ այն խօսից, ուր չի

պատ

պատկանիր ծիծաղել։
Ի մէջ գուեհիկ մարդկանց, մի՛ խօ-
սիր խրթին և ծածուկ բան, որ չի
հասկացուիր։ և մի՛ գրաբառ խօսիր.
այլ այնպէս՝ որ կարասցեն հասկանալ
զոր ինչ խօսիս։ և մի՛ երևեցուցա-
ներ զքեզ մեծ. կամ հարուստ և
կամ գիտուն. այլ խոնարհաբար վա-
րիր ընդ նոսա։

Մ՚էկ տեղ մի որ համդիպիս և տե-
սանես երկու կամ երեք մարդ որ կու
խօսին ընդ միմեանս, նց խօսից մէջն
մի՛ մտանէր՝ և մի՛ հարցանէր թէ զոր
մէ՞ կու խօսին. այլ լուռ կացիր մին-
չև որ զիւրեանց խօսքն աւարտեն։

Իսկ թէ որ հարցանէն քեզ վասն այն
խօսած բանիցն զոր ինչ գիտես՝ զայն
ասա. և թէ քո ասելն վնասակար է
և կամ թէ ոչ գիտես, ասա թէ լաւ
մի չեմ գիտեր։ և թէ ՚ի քէն ծա-
ծուկ կու խօսին, սակաւ մի հեռացիր։

Յորժամ ՚ի մէջ մարդկանց կամենաս
խօսիլ, յառաջ մտածեա թէ զի՞նչ

խօսելոց ես . մի՛ բամբասեր զմարդ,
չի լինի որ այն մարդկանց միջէն մէկ
բարեկամ մի գտնուի բամբասեալ
մարդոյն և երթեալ պատմէ նմա :
կամ թէ այլք չեն հաճիր լսել զբամ_
բասանս : մի՛ պատմեր զգարշելի և
զզազիր բանս կամ պիղծ գործս . և
մի՛ զցնորական երազս . և մի՛ զբօթալի
և զտրտմալի բանս : այլ տես թէ
զի՞նչ բան առաւել կու սիրեն ,
այնպիսի բան պատմէ : և 'ի խօսիլն
քո մի՛ շատ շարժեր զձեռքերդ և մի՛
աչքերդ և մի՛ զգլուխդ և մի՛ բարձր
խօսիր . և մի՛ պատմեր անհաւատալի
իրս և կամ սուտ բանս և մի՛ հարցա_
ներ անպատշաճ բանս . և մի՛ գովեր
զմարդ առաւել քան զչափն :

Յորժամ ընդ մարդոյ որ խօսիս ծա_
ծուկ՝ զբերանդ դէպ 'ի յականջէն
մօտ տար . չի լինի որ բերան առ բե_
րան խօսելն 'ի քոյ բերանէդ հոտ առ_
նու և գարշի 'ի քէն :

Յորժամ որ խօսիս ընդ մեծ մարդ_

կանց կամ հետ վարդապետին կամ ընդ մեծամեծ աղայից կամ ընդ վարդապետի՝ երկու ձեռքդ 'ի վերայ փորոյդ բարև ըմբռնէ և 'ի վայր հայելով խոնարհաբար պատասխանի տուր զոր ինչ հարցանէ · և մի' ձիգ ձիգ հայիր 'ի յերեսն ընդ որոյ խօսիս կամ պատասխանես ։ և մի' նըստիր առաջի նց դուքեղէն մինչև որ ասեն քեզ թէ նիստ ։

Յորժամ որ գնաս 'ի ժողովս մարդկանց ուր գտանի աղքատ և հարուստ, իմաստուն և գուեհիկ, մեծերդ 'ի վր ժողովէ՝ և յետոյ մտիր 'ի ներս և տուր ամենուն ողջոյն համեստութբ և կանգնէ սակաւ մի ։ մի' 'ի վերայ ամենուն անցանէր և նստիր · այլ 'ի վայր տեղի մի նիստ, մինչև որ տանուտէրն զքեզ ուր տեղ որ արժան կու տեսանէ և հրաւիրէ · կամ թէ այն տեղի մարդիքն ուր տեղ որ ցուցանեն և կոչեն այն տեղն նիստ ։

Իսկ թէ քան զամենն յառաջ գնաս՝ որ

մարդ չէ եկած և գիտես որ գալոց են, վերի ասածիս պէս արա · զի թէ 'ի վերն բազմիս, յետոյ քան զքեզ պատուաւոր մարդ մի կու գայ, և յայնժամ 'ի վարի կողմն կու իջուցանեն զքեզ և յետոյ ամօթով կու լինիս ։

Երկրորդ՝ յորժամ որ նստիս, մի՛ դըներ զմէկ ոտքդ 'ի վերայ ծնկանդ և մի՛ պարզեր զձեռքերդ 'ի վր բարձին և մի՛ երկարացուցանէր զոտքերդ առաջի մարդկանց և մի՛ խիստ կըռթնիր բարձին և մի՛ մեծ պաղտաշ լարելով նստիր այլ ծունկ չոքիր յառաջ, և յետոյ պարզիր չափով ։ Եթէ դու պատուաւոր մարդ ես, այն տեղն լի նոցա զհայրն և զխաթրն հարցուր · և թէ չես՝ նոքա քեզ կու հարցանեն և բարի եկիր կասեն · և գոհութիւն տուր այ, և շնորհակալ եղիր խոնարհութբ զքեզ հարցանողացն ։

Եւ թէ խօսիլ սկսես՝ նախ երկար բան մի՛ պատմեր ։ երկրորդ մի՛ յօժարիր զնոր լսած բան պատմել, որ լաւ

մի

մի չես գիտեր ․ երրորդ եթէ այլքն
որ պատմեն զնոր ինչ կամ զհին և իցէ՝
մի՛ ասեր թէ ես գիտեմ․ և մի՛ կտրեր
զնորա պատմութիւնն և մի՛ շարժեր
զգլուխդ գիտողի նման թէ և չես
կտրեր զբանն։

Չորրորդ՝ յորժամ որ պատմես զբան
մի, մի՛ ցայթկեցուցաներ զքո թուքի
փշրանքներն 'ի բերանէն 'ի վ̄ր այլոց
և մի՛ 'ի վերայ թղթոյ մինչ կարդաս
զգիրք կամ զթուղթ ։ մի՛ թողուր եր
կարել ըղունգացդ որ աղտ մտանու 'ի
մէջն և սևանայ ։

Հինգերորդ՝ 'ի մէջ մարդկանց որ
նստած ես, մէջ մարդոյ ականջն 'ի
վար բան մի ասեր այլ տար 'ի դուրս
առանձին և խօսեա՛։

Վեցերորդ՝ մինչ պատմես զբան ինչ՝
մի՛ մշտեր կամ հրեր զքովի եղեալ
ընկերներդ, և մի՛ բարձրացուցանէր
զձայնդ առաւել և մի՛ շարժիր ձեռօք
և գլխով և մի՛ ծիծաղելով ․ մի՛ զե-
զուդ փաթութելով և մի՛ խիստ քաշ



քաշ

քաշ խօսելով, զի ձանձրութիւն բերէ լսողաց :

Իսկ եթէ տղայ կամ մանուկ ես՝ բնաւ չի վայելէր քեզ խօսիլ ՚ի մէջ մարդկանց · այլ ականջ դնել ամենեցուն և նկատել զոր ինչ խօսին կամ որպէս շարժին և կենցաղավարին հետ միմեանց :

Երրորդ՝ եթէ ՚ի ձմեռնային ժամանակի հանդիպի ձեր մէկտեղիլն, և ձեր մէջն մանկալ կամ թաղարով կրակ դնեն վառան տաքանալոյ, մի խաղար հետ կրակին · և մի մաշայով խառնէր զկրակն · և մի թքանէր կամ խնջէր ՚ի մէջ կրակին կամ թաղարին : և մի ձգեր գէշ հոտեր ունեցող իրքեր ՚ի մէջն : մի թքանէր հեռուէն դէպ ՚ի դուրս կամ ՚ի վերայ պատի կամ դէպ ՚ի փապուչլուխն · և մի խնջէր զքիթդ ՚ի մէջ ձեռուացդ և նետէր ՚ի դուրս կամ աստ և անդ · այլ ՚ի մէջ մահրամայիդ · կամ ել ՚ի դուրս և անդարա զոր ինչ կամիս և դարձիր ՚ի տեղդ :

Չորրորդ՝ մի սրբէր զքիթդ կամ


զխըր

զխուլէքդ ձեռօք կամ թեզնիքներովդ
և կամ փեշովդ , այլ մաշհրամայովդ :
Երրորդ՝ եթէ ՚ի դուրսն խնջես ,
զխլլտ ձեռքդ ՚ի վր̃ պատին մի՛ քսեր:
Իսկ թէ ներսն ՚ի մէջ մաշհրամայիդ
խնջես, զ.քիթդ մի՛ գուացներ խիստ·
և մի՛ հաներ զձայնն փողոյ նման ·
նոյնպէս և ՚ի խուխալն և թքանելն մի՛
խանչեր խողի նման ձայն հանելով :
Չորրորդ՝ եթէ որ թքանես կամ խլն
ջես ՚ի մէջ մաշհրամայիդ , մի՛ բանար
և հայիր ՚ի մէջն · և մի՛ այլոց ցոյց
տար · և մի՛ բռնէն ՚ի կրակին վերայ
չորացուցանելոյ համար :
Հինգերորդ՝ եթէ ցեխոտ կամ չա‿
մուռոտ չուխա կամ կապա որ ունիս,
՚ի վերայ կրակին մի՛ չորացներ և շփեր
զցեխն առաջի մարդկանց : Թէպէտ
չամուռոտ փեշով նստիլն ևս անկարգ
է, սակայն թէ կարելի է՝ ել ՚ի դուրս
յօտայէն , և այն տեղն փոխեա զհան‿
դերձդ · կամ թէ կրակ բերել տուր
և անդ չորացո և շփէ զցեխն և եկ նրս
տիր ՚ի տեղդ :



Սու

Նա՛ զգոյշ լե՛ր՝ զի մի՛ ծաղր առնիցես զմարդ ոք, որ գտանի անդ 'ի մէջ վերոյասացեալ պակասութե՟. եւ մի՛ նկատեր կամ ջանար տեսանել կամ լսել զպակասութի՟ս այլոց. եւ մի՛ ծիծաղեր 'ի վերայ այլոց պակասութե՟. այլ թէ կարելի է՝ ծածկաբար խրատեա՛ զայնպիսին որ չաւնէ զանպատշաճ իրս. բայց մի՛ իշխեր մեծաւորի պէս, այլ եղբայրաբար:

Յորժամ մէկ տեղ մի կու կանգնիս առաջի մեծաւորի կամ 'ի ճանապարհին՝ մի՛ դներ զմէկ ոտքդ 'ի վերայ միւսին. եւ կամ փաթտեր ոտքերդ մէկ զմէկ. եւ մի՛ քարշեր զմէկ ոտքդ 'ի վեր, եւ մի՛ կանգնիր մէկ ոտքի վր՟: Նոյնպէս թէ եւ առաջի խանութի կանգնիս՝ մի՛ աներ այնպէս: եւ թէ նստիս 'ի խանութ մի, եւ ոտքերդ 'ի վայր կախ որ թողուս՝ մի՛ շարժեր եւ խաղցըներ. եւ մի՛ խենդ-մնդկեր ինքնիրեն եւ մի՛ ծիծաղիր. եւ մի՛ խաղ կամ տաղ ասեր, այլ հանդարտ կացիր:

Յորժամ մեծաւոր կամ վարպետ և
կամ հայր կամ մայրդ զքեզ 'ի տեղ մի
որ կու ուղարկէ՝ շուտով գնա. մի՛
ուշանար 'ի ճանապարհին կամ խա-
ղար հետ տղայոց. և թէ այլքն որ
կու խաղան՝ մի՛ կանգնիր հայիր,
այլ անցիր գնա: և երբ որ հասանիս
'ի տեղդ՝ մի՛ ծպլանմիշ լինիր, այլ
շուտով զի՞նչ որ առնելոյ ես՝ առ. և
կամ խօսելոյ՝ ասա. և այն մարդն
զի՞նչ կասէ քեզ կամ կու պատաս-
խանէ՝ 'ի միտքդ պահէ և դարձիր դէպ
'ի զքեզ ուղարկողին շուտով, որ չի
մոռանաս ասածն. ուրիշ բան մի՛
խառներ յերկու կողմէն ալ զինչ լսե-
ցիր զայն ասա: եթէ նոքա որ մէկ
զմէկու աւելի պակաս քիւֆիւր
կամ անէծք ասերեն, զայն
մի՛ ասէր որ խռովութի
և կռուի՛ չի լինի:

## Յաղագս ՚ի սեղան նստելոյ եւ չափ ուտելոյ։

### Գլուխ Երկրորդ ։

✵ Հարց։

Յորժամ որ ՚ի սեղան նստիմ ՚ի յուտել, որպէս պարտիմ վարիլ ։

✵ Պատ ։

Յորժամ՝ ՚ի սեղան նստիս ՚ի յուտել, տես մի՞ կայ պատուելի մարդ՝ քահանայ և կամ իշխան և տարգք մեծ մարդ, նա թող օրհնէ, և ապա նախ օրհնողին սկսէ ուտել կամ տանիլ ըզ ձեռքն ՚ի սեղանի կերակուրն՝ և յետոյ դու տար զձեռքդ. և մինչ սկսար ուտել, հինգ մատովդ մի՛ ըմբռներ զպատառդ և մի՛ թաթախեր զամէն մատներդ կերակուրով. այլ երեք մատամբդ ըմբռնէ զպատառն կերակուրով։

Երկրորդ՝ մի՛ ամէն պատառովդ սրբէր
զմատներդ ՚ի սրբուելոյ կտաւն. և
մի՛ ծծեր զմատներդ չըփըլուցնելով
շըրթունքներուդ. Նաև զպատառդ՝
մի՛ խիստ մեծ շիներ կամ կըտրեր և
մի՛ խիստ փոքր. այլ չափաւոր լինի.
երբ որ զպատառն կու կտրես, երկու
ձեռօք կտրէ. մէկ ձեռամբ մի՛ կտրեր։
՚Ի ծամելն քո զպատառն՝ եթէ պատառ
հիցի ՚ի մէջ քոր՝ կամ այլ ինչ, և
կամիցիս հանել զծամածդ, մի՛ ցոյց
տար մարդոյ. այլ կամացուկ մի ձգէ
՚ի ներքոյ սեղանոյն։

Երրորդ՝ մի՛ ուտեր անկուշտութե՛
շուտ շուտ. և մի՛ խիստ թոյլ թոյլ,
այլ միջակօրէն. մէկ պատառն կուլ
չի տուած՝ միւս պատառն մի՛ դներ
՚ի բերան քո։

Չորրորդ՝ մի՛ ՚ի ծամելն փակեր զբե-
րանդ և մի՛ ուռեցներ զթուշդ. և
մի՛ փշար քթովդ. և մի՛ չըփըռացըներ
զլեզուդ կամ զշրթունքդ. և մի՛ հե-



վար

վար խիստ ։ Եւ մինչ կերակուր 'ի բե-
րանդ է՝ մի' խօսիր հետ մարդոյ։
Հինգերորդ՝ մի' տնկեր աչքերդ մէջ
սահանին. եւ մի' 'ի վերայ ուտողաց թէ
որպ՟ ուտեն. մինչ կու ծամես զմէկ
պատառն կուլ չի տուած՝ ուրիշ պա-
տառ մի կրկին մի' դներ 'ի բերանդ.
մի' խառներ զձեռքդ 'ի մէջ կերա-
կուրին. եւ մի' առնուր 'ի սահանին մէ-
ջէն այլոց առջեւի բաժինն կերակուրն.
այլ միայն քո առաջի եղած բաժինէն
կամ 'ի սահանէն առ ։ Եւ մի' ջանար
քան զամէն առաւել ուտել, այլ պա-
կաս ուտել ։ մի' դներ երկու ձեռք
'ի մէջ սեղանոյն. եւ մի' պարզեր եր-
կու թիկունքդ 'ի վերայ սեղանոյն.
Եւ մի' խիստ ծռիր 'ի մէջ սեղանոյն.
Եւ մի' նեղացներ զընկերներդ այդ-
պիսի անպատշաճ արարողութեամբ։
Եւ թէ ծռուիս 'ի դնելն զպատառն 'ի
բերան քո, յետոյ կանգուն նստիր
վերստին։

Վեցերորդ՝ Թէ որ առաջևդ հաց չէ մնայ, մի՛ քարշեր այլոց առաջևի հացն· այլ թէ կարելի է որ բերեն · և թէ ոչ՝ կա՛ց այնպէս , մինչև որ այլք առ_ ասնեն և դնեն առաջի քո: Թէ հաց կայ առաջևդ՝ մի՛ փշրեր և մի՛ թա_ թախեր կերակուր դնելով 'ի մէջ նորա· և թէ դնես և թաթախես՝ կե՛ր զայն հացն և մի՛ այնպէս թողուր՝ և մի՛ տար այլոց:

Մի՛ թափեր ներքև սեղանոյն հաց կամ այլ ինչ կերակուր : նաև մի՛ 'ի վերայ քո թափեր :

Եօթներորդ՝ յորժամ զանազան կե_ րակուր որ դնեն 'ի մէջ սեղանոյն , և քո չսիրած կերակուրն պատահմամբ քո առաջևն որ դնեն , մի՛ քշեր զայն առաջևն , և մի՛ քարշեր քո սիրածն քո առաջևն , այլ թող այնպէս մնայ· իսկ թէ քո սիրածն քո առաջևն դը_ նեն , մի՛ ջանար ուտել զամենն , այլ սակաւ կեր՝ և թող զբաժին այլոց



ըն

ընկերացդ ։ և եթէ ոմանք ոչ կարեն երկարել և առնուլ , դու տուր նց · այլքն որ քեզ տան՝ առ ։ կերպ կերպ կերակուրներն մի՛ խառներ մէկ զմէկ և ուտեր · լինի թէ ուրիշն չի ուտեր այնպէս ։

Ութներորդ՝ Թաթախեալ ձեռօք մի՛ ըմբռներ զդգալ կամ չաթալ կամ զգինոյ գաւաթ և կամ զդանակ ։ և մի՛ աղ առնուր ՚ի յաղէ ամանէն առ ՚ի ցանել ՚ի վերայ կերակրոյ · և մի՛ քերեր զգլուխդ կամ զմարմինդ ։ և մի՛ քարշեր զպուռնօթի թաթախ մատամբ ։ և մի՛ սրբեր զձեռքդ ՚ի վերայ հացի կամ ՚ի վր հանդերձիդ և կամ աստ և անդ , կամ ՚ի վերայ ծնկան փէշկիրին ։ այլ խնդրեա զկտաւ , որ լաւ մի սրբես զձեռքդ , և ապա արա զոր ինչ առնելոց ես ։

Իններորդ՝ մինչ ուտես զկերակուր կամ զապուր դգալով , մի՛ թափեր ՚ի վերայ քոյ և մի՛ ՚ի վերայ սեղանոյ ,



կամ

կամ ՚ի վերայ աղէն՝ կամ պղպեղէն։ չափաւոր առ զկերակուրն որ չի թափի ։ և զդգալն խիստ ՚ի ծայրէն մի՛ ըմբռներ մի՛ խիստ ՚ի վայրէն ․ այլ միջակ կերպիւ ։ և յորժամ ոսկոր մի առնուս՝ մի՛ կրծեր անասնոյ նման ․ և մի՛ ծեծեր ՚ի վերայ սեղանոյ ․ և մի՛ ՚ի վր͞ հացին առ ՚ի հանելոյ զծուծն՝ և մի՛ աղտոտեր զձեռքերդ ։ և մի՛ սըրբեր զկերակուրի ամանն կամ սահանն ․ այլ թող մնայ սակաւ մի ՚ի միջին , յետին սպասաւորաց ուտելոյ։

Մի՛ ըմպեր զջուրն կերակրոյ առնելով զամանն ՚ի բերան քո։ մի՛ փշրեր շատ հաց ՚ի մէջ ապուրին ․ այլ սակաւ եթէ կամիս։

Տաններորդ՝ զի զգինին առանց ջրոյ մի՛ ըմպեր ․ և մի՛ երկու ձեռօք առնուր զգաւաթն ․ և մի՛ փշուր քթովդ ՚ի խմելն և մի՛ յետ խմելոյդ հառաչեր։ և մի՛ ցանկար շատ խմելոյ կամ արբենալոյ ։ և մի՛ թողուր շատ ըմբռնել

զգաւ̂աթն 'ի ձեռդ։ երբ դնես զգինին 'ի բերանդ, մի՛ խիստ շուտով ըմպեր և մի՛ խիստ յամր այլ միջակ կերպի̂ւ ։ մի՛ թափեր զգինին 'ի վերայ քո կամ 'ի վերայ սեղանոյ կամ հացի կամ 'ի մէջ աղի և պղպեղի ։ կամ 'ի վերայ այլոց իրաց ։ և մի՛ խիստ լնուր զգա-ւ̂աթն և մի՛ թողուր լնուլ խիստ • երբ որ ըմպես՝ նախ սրբեա՛ զշրթ-թունքդ • մի՛ ծամեր զգինին և մի՛ լու̂անար զբերանդ գինեա̂ւ • և մի՛ անյագ կերպի̂ւ ըմպելով թափէր 'ի շրթանցդ զգինին։ և թէ մէկ անգա-մին չես կարեր ըմպել, մինչև 'ի կէսն ըմպէ, և սակա̂ւ մի շունչ առ և կըր-կին խմէ • և թէ չես կարեր, յետ դարձուր ։

Այ̂ եթէ տանուտէրն մոլեգնի և ըս-տիպէ քեզ ըմպել՝ աղաչեա՛ թէ չեմ կարեր ըմպել • և եթէ կրկին ստիպէ՝ խոստացիր թէ յետոյ կու խմեմ կամ զցա̂ւ ունիլ պատճառէ ։

Նաև մինչ ունիս 'ի բերան քո զկե-
րակուր՝ կուլ չի տուած մի՛ խմեր
զջուր և կամ զգինի . և երբ խմես
զջուր կամ զգինի , մի՛ հայիր 'ի յե-
րեսս մարդկանց ։

Եթէ առնուս զգինի՝ տես թէ քան
զքեզ մեծի ձեռքն այլ կայ՝ մի՛ խմեր
մինչև որ նա խմէ և յետոյ դու ։

Եւ՛ զգոյշ լեր՝ որքան կարես 'ի վերայ
սեղանոյ , չի լինի չի լինի որ խօսես .
կամ զպալղամդ բերես 'ի բերանդ .
կամ թքանես ուր և իցէ և կամ խըն-
ջես զքիթդ . մի՛ խնջեր կամ թքնուր
'ի մէջ ծնկան փեշկիրին ։ այլ շուտով
գնա՛ 'ի դուրս և կամ հեռացիր 'ի սե-
ղանոյ , և անդ արա զոր ինչ առնելոց
ես , և դարձիր 'ի տեղդ ։

Մի՛ գերգսատար ձայնիւ . մանաւանդ
որ բողկ կերած լինիս . զի հոտ առ-
նողքն խիստ կու գարշին ։

Եւ՛ եթէ յանկարծակի հազող կամ
փռընգտալ հանդիպիլ՝ զերեսդ դարձո՛
'ի

'ի յետեւդ ։ կամ զմահրամայդ դէպ
'ի բերանոյդ ըմբռնէ ։ չէ լինի որ ըզ-
թուքդ 'ի յերեսս մարդոյ կամ 'ի մէջ
սեղանոյ կամ կերակրոյ ցայթկեցու-
ցանես , և կամ խլլէքդ թռուցանես ։
և մի' շարժիր զսեղանն կոխելով ըզ-
ձեռքդ ։

Մ`ետասաներորդ` յորժամ որ յագե-
նաս , մի' ելաներ 'ի սեղանոյ մինչև
որ քան զքեզ մեծն ելանէ ։

Եւ եթէ մեծ ես` մի' ելաներ յանկար
ծակի օրհնել զսեղանն . այլ նկատեա՛
և տե՛ս` թէ որ ուտող կայ դեռ ևս
համբերեա՛ , որ յագենան ամ̃քեան ։

Եւ յետ կշտանալոյդ` մի' խաղար 'ի
վերայ սեղանոյ . մի' կոտորեր զոսկր
և կամ զկուտ մրգաց կամ եէմիշից ,
և կամ մի' կտրեր զկեղև ինչ ։

Մ`ի' խօթեր զդանակ 'ի բերան քո
և մի' խառներ դանակով զակռաններդ ,
և մի' մատամբդ խառներ . այլ միայն
ատըխկաւ . այսինքն հիլալով ։

Մի՛ անլուա ձեռքերդ խօթեր 'ի ձէ-
պըդ կամ խաւաներ. և մի՛ դներ 'ի վե՛ր
հանդերձիդ. այլ 'ի յերեսս սեղանոյն
դիր մինչև ելանես և լուացուիս։

Եթէ այլքն կշտացան և չեն ուտեր,
դու ևս մի՛ ուտեր։

Մի՛ որբեր զչալթալ դանակն 'ի վերայ
ծնկան փեշկիրի կամ 'ի վերայ հացի.
այլ թող այնպէս, և յետոյ հետ ձե-
ռացդ լուանաս։

Սեղանի տիրոջ չի վայելեր ստիպել
և կամ զօռ անել մարդկանց շատ խը-
մելոյ. բայց վասն ուտելոյ աղաչեսցէ։
Նաև թող հայի 'ի մէջ սեղանոյ. եթէ
մարդոյ առաջևն հաց չիկայ. հաց դը-
նել տայ կամ դնէ. եթէ պարապ ա-
ման կայ մարդոյ առաջևն՝ թող վեր-
ցընել տայ. և ուրիշ աման մի այլ պա-
րապ բերէ, որ այն տեղըն դնեն մար-
դիկ զոսկերս մսոց և կամ զփուշըս
ձկանց։

'Ի մէջ սեղանոյ՝ չէ՛ պարտ տրտում

և տխուր մնալ · մանաւանդ տանու_
տէրն պարտի զուարթ լինել, զի մի՛
միւս մարդիկքն 'ի նա հայելով տրտ
մեսցին ։ բայց եթէ 'ի տուն մեռելոյ
իցէ՝ ոչ պարտի լինել ուրախութի ։

Ո՛չ է պարտ 'ի մէջ սեղանոյ բարկա_
նալ կամ կռուել ընդ մարդոյ և կամ
հակառակիլ · կամ ցուցանել զդէմս
բարկութեան , կամ հայհոյել և կամ
անէծք տալ մարդոյ և կամ բամբա_
սել զոք ։

Նաև ոչ է պարտ երկար պատմու_
թիւն անել կամ անշահ խօսիլ և ձե_
ռօք շախա անել՝ և զրախօսութիւն
անել և յայտնել զգինովութիւն իւր ·
և կամ զայլոց գինովութիւնն , և կամ
չեխել զոք ։

❋ Հարց ։

Յորժամ ելանեմ 'ի սեղանոյն՝ զի՞նչ
պարտ է առնել ։

❋ Պատ ։

Յորժամ ելանես 'ի սեղանոյն՝ նախ
պար

պարտիս գոհանալ զԱյ, և օրհնել ըզ սեղանն հայր մերիւ· բայց մինն եղիցի գլխաւոր օրհնելոյ զսեղանն ձայնիւ՝ և այլքն համաձայնին ընդ նմա նուազ ձայնիւ, որ ինքն միայն լսէ և ոչ այլ քըն · և ապա լուացիր կարգաւ · զի նախ մեծաւորն՝ և ապա այլքն։

Մի՛ խիստ շատ փորփրեցուցաներ ըզ ապօնն և մի՛ առնուր 'ի բերանդ · այլ 'ի վերայ շրթանցդ քսէ սակաւ մի, և յետոյ լուա զբերանդ և զշրթունքդ ջրով · մի՛ խնջեր և մի՛ ձգեր զպալ զամդ 'ի վերայ ծածկոցի լեգէնին կամ զափսէտին · այլ 'ի բաց առ զափսէտն և թուք 'ի մէջն · լուա և զչաթալ դանակս քո և սրբեա՛։

Զկնի լուացուելոյ՝ շուտով մի՛ նն ջեր · այլ նիստ սակաւ մի և խօսիր ընդ ընկերաց, և կամ շուրջ եկ, և ապա գնա աղօթել ջերմեռանդապէս ։ և երբ ննջել կամիս՝ մի՛ հաներ զհան դերձդ առաջի մարդկանց · և մի՛ ցոյց



տար

տար զքեզ մերկ առաջի Նոցա • և մի՛
շուրջ գար այնպէս աստ և անդ կամ
'ի վայր և 'ի վեր։ զա͞մ հանդերձս քո
'ի մի տեղ դիր , որ 'ի յառաւօտուն
զամէնն 'ի մէկ տեղէն առնուս և
յագանիս։

Ա՛յ 'ի պառկիլն քո՝ խաչակնքեա զե-
րեսդ նաև 'ի վերայ բարձին ։ մի՛
պառկիր 'ի վերայ կռնակիդ և մի՛ 'ի
վերայ բերանոյդ • այլ 'ի վերայ մէկ
երեսիդ ընկողմանիր • մի՛ տարածեր
զձեռքերդ , և մի՛ բանար զոտքերդ
լայնապէս • այլ համեստութեամբ պառ-
կիր։ և 'ի ննջելն մի՛ բանար զբերանդ,
և մի՛ հաներ զշապիկդ , զի չէ վայե-
լուչ • և մի՛ մերկ պառկիր • և
մի՛ բաց թողուր զքեզ
մրսիլ։

Կա. ապաստանորդաց սեղանոյ չափ այլ եւրայց:

## Գլուխ Ութերորդ:

### Հարց:

Ապաստանորդքն սեղանոյն որո՞վ պարտին ծառայել կամ շարժել:

### Պատ:

Ապաստանորդք սեղանոյն՝ նախ պարտին սփռել զկտաւ ինչ ՚ի ներքոյ սեղանոյ, և ապա դնել զսեղանն ՚ի վերայ նր̃:

Երկրորդ՝ պարտ է կորատել դանակով զհացն ՚ի մէջ սկլէյի և տանիլ շարել ըստ բաւականին ՚ի սեղանն, և յետոյ փռել զդեստուխանն կամ զծնկան փէշ կիրն շուրջ զհացերոցքն . և յետոյ երթալ լնուլ նորապէս զաղ և զպղպեղ ՚ի մէջ ամանին և բերել դնել:

Եւ եթէ ունին զսովորութի̄ չալթալ դանակով ուտել, զամանք այլ բերել դնել:

Եւ եթէ իցեն կանանչեղէնք՝ զայնոսիկ ևս դնիցեն: Նաև թէ յառաջագոյն ուտելոց են զապուրեղէնս, զդգալներն ևս բերեալ շարեսցեն ՚ի սեղանն կար-



գաւ

գա՛ւ. և ապա երթան՚ի տնտեսութեան կար
գադրեսցեն զկերակուրն մինչև որ մար
դիկքն նստիցեն ՚ի սեղան ։ Եւ եթէ
կերակուրքն հայլին գալ, խոհկոյն առեալ
բերէ ՚ի սեղան . եթէ կերակուրն սա_
հանն խիստ տաք է՝ կամ թէ խիստ մեծ
է , երկու ձեռօք ըմբռնէ մէկ հատն .
և եթէ փոքր է և ո՛չ է խիստ տաք՝ եր_
կու երկու բեր . մի՛ խօթեր զբութ
մատն քո ՚ի մէջ կերակրոյ . և մի՛ քսեր
զատհանն ՚ի վ͞ր քոյ և մի՛ ՚ի վ͞ր այլոյ .
և մի՛ թափեր ՚ի վ͞ր մարդկանց նստո_
ղաց . մի՛ ՚ի դնելն և մի՛ ՚ի վերցնելն ։
և մի՛ տանիր կամ բերէր զերկու աման
մէկ ձեռամբ . և մի՛ ՚ի վ͞ր երկու ձե_
ռացդ երեք աման . եթէ պարապ և
եթէ լիք ։

Երրորդ՝ երբ ուտեն նոքա՝ կանգնէ
սակա՛ւ մի հեռագոյն ՚ի նոցանէ , և պատ
րաստ եղիր կատարելոյ զոր ինչ ասիցեն .
կամ պատրաստեա՛ զգինին բաշխելոյ .
նաև զջուր փոքր փարչովկո՛ւմ և զգա
ւաթներն ։ մի՛ տնկեր աչքերդ ՚ի բե_
րանս

րանս ուտողաց, զի մի՛ կարծիցեն թէ
համարիս զպատառս նց ։ մի՛ խածալար
դու քեզի մի՛ դներ մէկ ոսքր 'ի վր
միւսին. և մի՛ փաթութեր առ միմեանս.
մի՛ կանգնիր 'ի վր մէկ ոսքիդ, վերա
ցընելով զմիւսն։

Մի՛ հոյլիր ատ և անդ. և մի՛ ծիծա
ղիր խիստ՝ երբ պատմեն ուտողքն զծի
ծաղելի բանս ։

Մի՛ թողուր զանդամն և գնար առանց
պատճառի ։

Մի՛ կախ թողուր զձեռքերդ առաջի
նոցա մի՛ դներ 'ի ձեպոտ՝ այլ 'ի վերայ
գօտոյդ բարև ըմբռնէ։

Մի՛ բանար զբերանդ որոշտալով կամ
երընձկտալով. այլ դարձո՛ զերեսս քո.
մի՛ բաց թողուր զբերանդ լսելով ըզ
զրոյցս նց. մի՛ խնջեր և մի՛ փշար քը
թովդ. և մի՛ թքաներ՝ և մի՛ ձայնիւ
խուխար, հանել զպաղղամս։ և մի՛ բերեր
զպաղղամն 'ի բերան քո՝ և կուլ տար.
այլ գնա 'ի դուրս և կամ հեռայիր 'ի
նոցանէ. երբեմն նկատեա 'ի մէջ սե

ղանոյն՝ և տես որոյ առաջին հաց չի
կայ՝ դիր զհաց . բայց կամացուկ մի
դիր, և մի՛ նետեր 'ի հեռուէն։ և թէ
կերակուր չիկայ՝ զնա՛ բեր։ և յորժամ
բերես՝ տես թէ մանները որ պարապ
են՝ կամ թէ ո՛չ ուտեն 'ի նոցանէ՝ վեր
ցուր և թէ ամանք որ ուտեն՝ թող մնայ.
և երբ քեզ ակնարկեն վերցնել՝ առ
և տար, և դարձիր 'ի տեղդ։

Մի՛ խօսիր հետ քեզ եղեալ եղբարցն,
որք են կանգնեալք 'ի սպասաւորու_
թեան և մի՛ ծիծաղիր։

'Ի բերել և 'ի տանիլ քո զկերակուր՝
մի՛ ուտեր 'ի ճանապարհին և մի՛ աղ
տոտեր զձեռքերդ և մի՛ երկարացներ
զղունգներդ, զի մի՛ տեսօղքն զզուես
ցին կամ գարշեսցին ։

Յորժամ որ գինի լնուս՝ նախ կար_
գաւորին և կամ պատուելի անձին
կամ մեծաւորին տուր , և ապա կար_
գաւ այլոց ամենեցուն . մի՛ խիստ լնուր
զգաւաթն և մի՛ խիստ սակաւ . այլ
չափաւոր լից՝ որ կարենաս տալ առանց


թա

թափելոյ · նաև առնօղն կարենայ 'ի
մէջն ջուր լեցընելոյ:

Նոյնպէս եթէ մարդոյ ջուր որ տաս՝
զփարչն մինչև 'ի շրթունքն մի՛ լնուր·
չլինի որ 'ի տալոյ ժամանակն թափես
զջուրն :

Մինչ բերես փարչն՝ մի՛ խօթեր և կամ
դներ զմատն քո 'ի մէջ փարչին , այլ
ըմբռնէ 'ի կօթէն · և մինչ տաս մար
դոյ՝ ներքևէն ըմբռնէ և դարձո զկօ
թըն դէպ 'ի առնօղն և զմիւս ձեռքդ 'ի
կուրծդ դնելով տուր նմա: և յորժամ
որ խմէ և տայ քեզ, ա՛ռ զնա շնորհակա
լութբ և կամ համբուրելով զձեռն նր:
Յորժամ որ ժողովես զսեղանն՝ կամ
վերացնես՝ մի՛ դներ զթաթախեալ
ամանները մի մեանց մէջն · այլ երկեր
կու համ վերցուր · բայց յառաջ ժողո
վէ դհացի կտորվանքն և դիր 'ի մէջ
սէլէյին կամ սէփէթին · և ապա վեր
ցուր զաղ պիպեռի ամանները · մի՛
խառներ զկերակուրներն մէկ զմէկ ·
այլ ինչպէս են՝ այնպէս տար զնա:

 Մի

Մի՛ սրբեր զսեղանն ձեռօք. այլ կտաւ
մի կտաւով սրբեա՛ և լից 'ի մէջ դա-
տարկ ամանի մի զաւելուքն կամ ըզ-
փշրանքն սեղանոյն ։ և ապա վերացո՛
զսեղանն և ժողովէ սփռեալ կտաւն և
աւլէ զտեղին. բայց դէպ 'ի վ̅ր մարդ-
կանց մի՛ աւլեր՝ այլ համեստութ̅բ արա՛։
Յորժամ որ լուացէին՝ տա՛ր զլէկէնն.
բայց մի՛ աղտոտեալ և կամ 'ի մէջն լը-
ւացվուք ջուր լինիցի. այլ թափէ զնա
յառաջագոյն և լուա՛ մինչ գիտես որ
մերձեցաւ ժամանակն ելանելոյ մարդ-
կանց 'ի սեղանոյն. և զկնի ելանելոյ նց̅՝
լից զփարիխն ջրով̃ բայց սակաւ եղիցի
տաքութ̅ին ջրոյն՝ և տար նախ առաջև
մեծաւորին , և ապա կարգաւ այլոցն։
և մինչ լնուս զջուրն 'ի ձեռսն՝ զձախ
ծունկդ չոգեցո՛ և զմիւս ծունկդ 'ի
վեր կալ. մի՛ ըմբռներ զփարիխն 'ի կօ-
թէն. այլ 'ի վզէն ըմբռնեալ լից չափա-
ւոր. մի՛ խիստ շատ և մի՛ խիստ սակաւ
վազցներ զջուրն. և մի՛ 'ի դուրս լնուր՝
այլ նկատեա՛ զմէջ տեղին լէկէնին ։ և



մինչ

մինչ լուացուին՝ ձգեսցէ մուսն զփէշ կնոջն ՚ի ձեռն նորա. և թէ ոչ գոյ ընկեր՝ դու յառաջագոյն առ ՚ի յօժարութ. և յայնժամ թողեալ զկպրիկն՝ ձգեմ ՚ի ձեռին զփէշկերն որ սրբուի ։

Մերձապէս մինչ գիտես որ գնալոց են՝ մարդիք ՚ի տունս իւրեանց՝ զխապուչներ նոցա շիտակեցո և պատրաստեա. բայց յառաջ մի՛ թողուր մնալ ՚ի փապուչըլուխն, զի մի՛ ՚ի յելանել և իջանելն կոխատիցին ։

※ Հարց ։

Զի՞նչ այլ ինչ պարտէ մեզ այլ և ուսանիլ ողք պետոյանան ՚ի քաղաքավարութեան մերում ։

※ Պատ ։

Պիտոյ են այլև զքաղաքավարութիւ ամանս, որով պարտիմք վարիլ ընդ ազգայն այնոցիկ որք համաբնակեալք եմք ընդ նոսա, և է խիստ հարկաւոր. Լաւ՝ ընդ այլազգեայն ասեմ. այսինքըն, ընդ տաճկացն միշտ պարտիմք



վա

վարել խոնարհութեամբ. զի Տէր առա_
քեալն ասէ թէ, ամ՛ անձն որ ընդ իշ_
խանութեամբ է՝ ի հնազանդութե
կացցէ. այսօր այլազգեաց թագաւո_
րութիւնն մեծ է և հզօր. մեք անոնց
իշխանութեան ի ներքոյ եմք, միշտ
պարտիմք հնազանդութեամբ կալ ընդ
նոսա և միշտ ցոյց տալ զնշան խոնար_
հութեան բաց ի մեղաց։ զի որքան
հետ նոցա ել և մուտս անես կամ
նստիս և կանգնիս, կամ թէ առ և
տուր անես, կամ ուտես և ըմպես,
միշտ քաղցրաբանութեամբ խօսեա և
խոնարհութեամբ։ և թէ առնելիք
ունիս՝ աղերսանօք խնդրեա։ և թէ
պարտք ունիս՝ կամ պատժոց արժան
սուչ կամ ղապահաթ ունիս, աղաչել
և պաղատիլ պիտոյ է քեզ։ զի թէ
նոքա բարկանան՝ և դու որ քաղցր
խօսիս կամ պատասխանես՝ անոնց բար_
կութիւնն կու մարես. որպէս ասէ
իմաստունն թէ, կակուղ պատասխա_
նին՝ շիջուցանէ զբարկութիւնն և



փշրէ

փշրէ · զբարսն՝ յոյժ խոնարհութեամբ
տաս և առնուս ։

Մի՛ զգոյշ լեր՝ չի լինի որ հակառակիս կամ դէմ խօսիս՝ և կամ ծաղր առնես՝ կամ յաւելի պակաս խօսք ասես՝ կամ թէ հոյհոյես, յետոյ 'ի մէջ մեծ փորձութեան կու անկանիս։ Նաև մի՛ վիճաբանիր խիստ վասն հաւատոյ՝ զի
է՛ յոյժ որոգայթաւոր։

Երկրորդ՝ հետ յունաց և հոռոմոց ընդ պուլղարաց և ընդ առնավուտից՝ որք են քրիստոնեայք, իբրև զեղբայր վարիս հետ նց · մի՛ արհամարհելով կամ տնազելով՝ կամ չհաւանելով՝ կամ հակառակ շարժելով · թէ աղքատ իցեն և թէ հարուստ · և չի լինի որ արատ դնես հաւատոցն նց · քանզի ըստ հաւատոյ իսկպ մեր եղբարքն են։

Երրորդ՝ ընդ հրէիցն ևս պարտ է վարիլ ընտանեկան քաղաքավարութեամբ · մի՛ հակառակելով և մի՛ արհամարհելով կամ տնազելով և կամ հոյհոյելով զօրէնս նոցա կամ իւրեանց · մի՛ ծիծաղիր 'ի վր նոցա կամ հարկաներ

և

և կամ նախատէր · զի մ՟ր առաքեալն
Պօղոս ասէ թէ, հրէից անհաւատու-
թեանքն մեզ հեթանոսացս փրկութի-
եղև ։ և Կոռնելիոս մեկնիչն ա՟ծա-
շունչին ասէ թէ, հրէայքն վկայք են
մովսիսական օրինաց և մարգարէից
զոր խօսեցաւ նոցա ա՟ծ ։ և քրիստո-
նէական օրէնքն 'ի յօրինաց և 'ի մար-
գարէիցն ն՟ց հաստատեցաւ · զի եթէ
նոքա 'ի ք՟ս հաւատային՝ մեք այժմ
ո՛չ կարէաք ճանաչել մովսիսական օրի-
նաց ծառայօղքն՝ թէ ո՞յք էին կամ
արդեօք ըմբռնեա՞լ իցեն զնոյն օրէն-
սըն · կամ թէ ա՟ծ իսկապէս տուեա՞լ
իցէր ն՟ց օրէնս մարգարէիւք ։

Եւ զի յառաջագոյն բազում անգամ
բարկացուցին զա՟ծ խրատարարութե՟ն
իւրեանց · վ՟ս այնորիկ արգել զնոսա
ա՟ծ 'ի յանհաւատութեան ։ նաև օրի-
նակ առնուլ պարտիմք մեք 'ի նոցանէ ·
զի թէ նոքա որ յառաջագոյն բռն-
ա՟ծապաշտք էին՝ ա՟ծ ո՛չ խնայեաց ն՟ց
մեք 'ի վերջս կռապաշտութեան գո-


րով

լով , 'ի յա̃ծպաշտութեան պատուաս֊
տեցեալ եղուք , շնորհական լինիլ
պարտիմք յո̃յ սանց հպարտութե̃ .
ո̃պ գրէ ս̃րբն Պօղոս թէ , դու որ ձի
թենիդ վայրենի էիր պատուաստե֊
ցար՝ մի՛ հպարտանար , այլ երկիր .
զի թէ ա̃ծ զբնականն ո՛չ խնայեաց, գու֊
ցէ և դու կոճապիցիս ։ զի թէ ընդ
նոսա հակառակիլ պիտոյ լինէր , մա֊
նաւանդ քրիստոնեայ թագաւորքն
հակառակելոցք էին . որոց 'ի ներքոյ
իշխանութեանց անթիւ հրէայք գոն,
սակայն խնամելով պահեն զնոսա ։

Ուրե̃ն մեզ ևս ո՛չ է պարտ հակա֊
ռակիլ . այլ վարիլ ըստ բնական
քաղաքավարութեան
ընդ նոսա ։

Շնորհիւ և ողորմութեամբն այ և բա-
րեխօսութեամբ երագահաս վկայի
իւրոյ սրբոյն Մինասայ՝ վերստին 'ի լոյս
ածեալ գրքոյկս, որ կոչի գիւ.
քաղաքավարութիւն:

Շարադրեցեալ 'ի յառաջնումն 'ի
պետրոս Մորդուպէ մեծի պօլսեցւոյ:

Արդ՝ որովհետև զանկիրթն՝ կրթէ
սա ոչ զխարտոց. և վասն յոյժ պի-
տանութեան ամենայնց այնպիսեաց, ջանաց
ազնուազարմ ակնցի յօհաննէնց հան-
գուցեալ մահտեսի սուքիասի որդի
նօտար պարոն Մաքէլն, կրկին ետ
տպել արդեամբ իւրով. վասն իւր հոգ-
ւոյն և այլ կենդանեաց և ննջեցելոց.
ուստի՝ յիշեսջի՛ք զպարգևս պապն իւր.
և զկողակիցն զմահտեսի սողոմէն. և
զծնողսն մահտեսի սուքիասն. և զմա-
տեսի սիրուհին. և զեղբայրսն պղտա-
ծիթն. որք դուք յիշեալք լիջիք
'ի քսէ Ամէն: